

ժողոված 229 ռ. 94 կ., վճռեց պատուիրել զանձագահին՝ յիշեալ զումարը զրել աւանդագրամց տումարի մէջ և ներկայացնել Ատեան, որպէս զի ուղարկեն Նարմիք խաչի բնիկութեան զլիսաւոր վարչութեանը, իսկ Վրաստանի և հմերեթի, Երևանաց Ղարաբաղի Կոնսիստորիաներին պատուիրել փութով ներկայացնել Սինօգին Շարմիք խաչի ընկերութեան համար ժողոված զանձանակազմամբ:

26 յուն. Սինօգը վճռեց աւանդագրամց տումարի մէջ մուծանել Ալաշիերատի զաղթականների անունով հանգանակած փողի մայորդը՝ այն է 10,250 ռ. ոսկի փողով որ հաւասար է 15,375 թղթագրամի:

28 յուն. Սինօգը վճռեց պատուիրել Շամախու Կոնսիստորիային մահմեդական Մահմեդ Մահմարամ օղլուն իւր խնդրի համաձայն մլրաւութեամբ ընկունել Հայոց եկեղեցու ծոցը:

28 յուն. Աւետարանոց զիւղի բնակչութիւնաւայի Սօնա Կարապետ—բէզեան Բազզաւարեան Վեհափառ Հայրապետին խնդրի եր մատուցել իւր ամուսին Միբրզա Մովսիսիանի երկար ժամանակեայ առանց համբաւի տարակայութեան պատճառաւ, թոյլ տալ իրեն մըտանել ի նոր ամուսնութիւն։ Վեհափառ Հայրապետի հրամանի համեմատ՝ Սինօգը անօրինեց պատուիրել Ղարաբաղի Կոնսիստորիային՝ Շուշեցի Միբրզա Մովսիսիանի տարակայութեան մասին յայտարարել «Սինօգական Հրամարակութեան» մէջ, ի հաշիւ խնդրատու Սօնա Բազզաւարեանի, և եթէ մինչեւ վեց ամիսը չիմացուի Միբրզա Մովսիսիանի ուր լինելը, թոյլ տալ նորա կնոջը մտանել ի նոր ամուսնութիւն։

30 յուն. Ղարաբաղի Կոնսիստորիայի թ. 2230 յայտարարութիւնը լսելով՝ Սինօգը վճռեց թոյլ տալ յիշեալ Կոնսիստորիային, օրինաւոր պայմանով Դանձասարի վանքի կալուածքում երևացող սրբահաշմը լսելով տալ հանքարան Էլեփերովին շահագործելու համար։

30 յուն. Սինօգը վճռեց հրամայել Երևանի Կոնսիստորիային մահմեդական Խըզօ Օսման օղլուն, իւր խնդրի համաձայն, մլրաւութեամբ ընդունել Հայոց եկեղեցու ծոցը:

4 փետր. Սինօգը լսելով Օշական զիւղի բնակիչների խնդրը և Երևանի Կոնսիստորիայի թ. 1741 յայտարարութիւնը ոյդ մասսին, հրամայեց Օշականի Եղիշե քահանայ Դէղթեան—Դարբինեանին անորոշ ժամանակով ուղարկել Սեանի անապատը ապաշխարելու, որովհեան նա մինչեւ հիմա չի կրել Սինօգի դրոշած պատիմը։

ԾԵՐԵԼՈՒԾ ԱՐԵՐԱՔԻ 1898 թ. ՓԵՏՐՈՒՅՔ.

ՍՈՒՐԵԲ ԿՈՅՑ ՍԱՆԴՈՒԽՈՑ,

ԵՐԱ ՆՈՐ ՇՈՐՈԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԵՐԱՆՑ ՀԵՊԻՆԱԿԱՑ

Արշակունեաց բարետոհմիկ սերնդից ընձիւղած այս մի համարի կոյսի համար կարգում ենք իրեն նուիրած մի կտոր շարականի մէջ։ Քե պարծի այսօր սուրբ եկեղեցին ով վկայուհի սուրբ Սանդուխաւ, որ զտիկնութեանն քո թողեր զփառաւ, որ զհայրականն քո թողեր զպաշտօն։ արդ՝ ինչ պաշտօն և փառքեր էին սոքաւ, որ թողեց վկայուհիս և մամար։ Թէ ում համար թողեց նա այդ ամենը, այս ցոյց է տալիս մեզ նոյն գողարիկ շարականը՝ բացականչելով։ «Վասն Քրիստոնի»։ իսկ թէ ի սէր բարեգութ Փրկչի նրա թողածները նրափիսի պաշտօններ և փառքեր էին, որոնցից սուրբ վկայուհւոյս կամաւորապէս հրաժարուելու պատճառաւ։ ըստ շարականիս, մեր սուրբ Եկեղեցին ևս պարծանքով առաւ ու վնջեց նրան իւր սրբոց հետ՝ ահաւասիկ։

Խնչպէս շատ աշխարհներ, այսպէս ևս Հայաստան այն ինչ ծանրապէս խորգում էր կռապաշտութեան մէջ, նոյն այն միջոցին Թովմաս տուքիւալի հրամանաւ սուրբն Թագէս անցնելով Եղեսիա՝ աւետարանական խօսքերով «Չայնէր զամենեսեան յերկնաւ որ ընթրիսն» (Սոփ. թ. 11)։ Այս երկնաւոր ընթրիքին զեռ ևս Փրկչի ժամանակից Եղեսիայի մէջ անձկով իմն սպասող մեր քաջն Աբգար, իմանալով առաքեալի զալուսար այլ իմանալով որ նա անդեղ անգարման հիւանդներ է բժշկում՝ որովհեան այս ժամանակ անդամական կանչուածքների մէջ լուսաւութելի ցաւով հիւանդ էր և ինքը, հրձուանոք առում է իւր մաքում։ «Նա է, վասն որոյ զրեացն Յիսուս», և անմիջապէս իմանչում է իւր մօտ (Խոր. թ. 9.)։ Սուրբն Թագէս մանելով Արգարի մօտ, ոչ միայն սաքի է հանում տիար ալքային՝ փարատելով նորա

գծնդակ ցաւերը, այլև իւր լուսաթաթախ աջը վերացնելով այնտեղ արքունիքում, արքայի և իւր թէի տակ ծուարած արքայազունների՝ իսկ գուրսը նրա բարեխնամ ձեռքի տակ գանուած ժողովրդի անվերայ՝ օրհնում, ապա միրտում է բոլորին, և միրտութեան սուրբ Հուրը ամէնքի վրայից գեռ ցամաքած «Զգուրս տաճարաց կողյն փակեցին. և որ ի վերայ բազնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ» (անդ):

Եւ այսպէս սուրբն թագէոս այս գեռաշաւատ ժողովրդի ան կամ փակելով հեթանոսութեան տաճարների դռները, և իւր տեղ իրրե պահապան ձեռնադրելով ու գներով Եղեսիայում մետաքսագործ Ազգէին, ապա Արդարիթ զիթով զալիս է Հայաստան նրա քեռորդի Սանատուրակի մօտ, ուր, թէպէտ Սանատուրուկ և իւր ժողովրդից շատերը հաւատում և միրտում են առաքեալի ձեռքով, սակայն նոցա այս գարձը երկար չէ աեւում, այլ նորից կանթեզուում է Հայաստանի մէջ կուսաշտութեան աղօտ լաստերը՝ Եղեսիայից զօրացնում է նրա լոյսը Արգարի որդի անարժանն Անանէ, որ «յետ մահուան հօրն երաց զտաճարս կողյն և կալու զտաշտոն հեթանոսութեանն» (Անդ. 17.), իսկ Հայաստանում՝ Սանատուրակ:

Թէ՛ Սանատուրակի մօտ իրշափ ի պատուի էին հեթանոսութեան այդ անարդ պաշտամունքները, այդ երեսում է պատմութիւնից: Երբ նաև Արդարի մահից յետոյ թագաւորում է Հայաստանում, նրա որդիքը կոտորելու ծարաւով այն ինչ Բազրատունեաց և Արծրունեաց քաջերի հետ իշնում է Եղեսիա «Տալ պատերազմ՝ ընդ որդիսն Արգարու, զի բոլորին աիրեսցէ թագաւորութեան» (անդ. ԱՅ.), այդ ժամանակ Եղեսիայի ամրող ժողովուրդը՝ ինկատի ունենալով անողորմ արքայի քրիստոնէից դէմ յարուցած խիզախ հալածանքները, աշարեկուած սրտով պատգամ է ուղարկում և յայտնում, որ կտայ նորա ձեռքը քաղաքը և իրենց թագաւորի գանձերը՝ որ և տուին, միայն թէ «Զի մի վրգովեցէ զնոսա ի քրիստոնէութեան հաւատոց» (Անդ.):

Աշա այսչափ ահարկու և ջերմ կուամոլ էր Սանատուրակ, և նա այն ինչ՝ մի կողմից իւր

սնուաի պաշտամունքների ետեից ընկած, իւր ահեղ սրով ամեն տեղ բոլրոքում էր հեթանոսութեան հուրը, իսկ միւս կողմից իւր իշխանութեան ահով և սաստով գանձ և քաղաք կողովաելով մեծացնում իւր թագաւորութեան շուքը, ահա ձիշդ այս շարաշոք ժամանակներն էր, որ նրա գուստով կոյսն Սանդուխտ իւր հօր ունեցածների ոչ մէկի և ոչ միւսի վերայ աշք չկլթեցնելով, «Թողեց իւր հայրական պաշտօնը, թողեց իւր տիկնութեան փառքերը», և աշակերտելով սրբազն թագէոս առաքեալին, այլ իմն անձկով և փափազով մօտեցաւ ու սիրեց՝ անվախճան և անկատելի փառքեր խոստացող նրա աւետարանած Փրկչին: Բայց տարան Սանատուրակ իւր կամաց և խելքի ընդդէմ իւր աղջկայ այս համարձակ արարքը արարք՝ որ ռիբրմաժողով զիւցակատար պաշտօնէիցն պատմեցին» իրեն, և նա առ ամօթօյ հալւում մաշւում էր, ոչ բնաւ (Սոփ. Ը. 14): Ընդհակուակը՝ թափելով իւր սրտից ամենայն ծնօղական գութ և սէր, առաքեալի զիսի հետ դսեր գլուխը անողորմ զահիճների մահարել պին բաժին հանեց:

Այժմ անցնենք վկայուհոյս հին և նոր շարականներին:

Մայր Աբոսիս Մատենադարանի 1588 համար կրօզ ոմն Սարգիս երեցի Շարականը, որի մասին շատ անգամ առիթ ենք ունեցել խօսելու, ունի մի Տօնացոյց, ուր հին շարականների յիշատակութեան հետ յիշատակում են և նորերը, և մի Ցանկ կամ Ցուցակ, որի մէջ յիշատակում են թէ հին ունոր շարականները և թէ նոցա հեղինակները:²

Արդ՝ բանալով նրա Տօնացոյցի 224³ երեսը, կարդում ենք. «Գշ. Սանդընատ կուսին. Հց. Էւրհնեմք զքեկ Ցէր. Արդ քիւ պարձիւ. թէ զիտես զնորերն ասաւ:

Իսկ բանալով նրա 223⁴ երեսի վերաց գրած Ցանկը, կարդում ենք ի միջի այլց՝ «Զթովակիմա և Անահին. Որ նախիմաց իմաս-

1. Տես «Արտաւած» 1894. Մարտ և 1897. Մարտ.

2. Այս Յանկից զատ, ունիմ ձեռին և այլ վիճակից Յանկեր, որոց միջոցաւ ներածին բափ կաշիած տեսլ ընթերցողներին իւրաքանչյուր հեղինակի գրածը:

առութեամբն, զՀրաշագեղ ծաղիկ մեծացուսցէն, զԱերնական բարեաց բաշխմանն գործ. զԱւադ շաբաթին մեծացուսցէքն. և զՀամբարձմանն. Խաչի Թագաւորդ մեր Քրիստոս. և զգեղարդեանն հսկ զու պարծանքդ պարծ. զՍուրբ Սանդիխառ նորն. զառաքելոյն ի յանսահման ծովին. զարբոյն Սարգսի Ամենասուրբ Երրորդութեամն ազնիւ ծ., և զՀզաւը արքաին զաւրեղ զինա. և այլ բազում. սուրբ վարդապետին վարդանա է ասացեալ :

ՄԵՒՔ կարգաւ յառաջ կրերենք նոյն և
այլ ձեռագիր Ծարսկաններից բազմարդիւն
վարդապետի այդ աշխատութիւնները, զնե-
լով այստեղ բոլորի ճակատին սուրբ կոյսիս ա-
նուամբ ոգեգրածները:

«Շաքական սրբոյն Սանդղաստ. Աւրհնութիւն»
թղ. 167^բ.

Անդրանիկ կամացն հաւը կամակա-
ար սուրբ Սանդուխտ հա(յ)աստա-
նեաց մայր հաւատոյ, սանդուզք ելից
յերկրէ յերկինս, բարեխաւս լեր առ
քրիստոս, մայր կուսութեան ազգաց
բազմաց:

Աւրիորդ հա(j)ոց մեծաց, հարսն երկ-
նաւոր անմահ բանին, զոր փեսաւ էրն
հրաւիրեաց՝ սուրբ առաքեալն թագթ էսս-
բարեխոււս լեր? :

Ժիրանածին ծաղիկ երկրի, թագ թոռ-
դումեան թագաւորաց մարտիրոսական և
կուսական պատկ առեր ի կյա որդւոյն
բարեխաւու լեր' :

Հ. Անձառելի սուրբ Ճառագայթ փառացն
հաւը, ի խնդիր մոլորելոցս առաքեցեր
զսուրբ զառաքեալն թամէէսս. որով
զքեղ միշտ աւբհնեմք Աստուած հարցն
(Ճըսոց):

Բանդ անեղ փեսայդ խաչեալ՝ որ ի
մահու առագաստէ մեծարեցեր զսուրբն
Սանդուխտ. որով զքեղ միշտ աւրհ՛:

Թագաւոր յաւիտենից Քըխսոս, թագալարդ հարսն ընկալար ի մորզումեան տանէ յերկինս, որով զքեզ մշշաւ աւրչ:

Ք. Բարձր արարեք զնայ յաւիտեան:
Զհայրն փառաց բարեբանեալ՝ որ ըն-
կալւ հարսն իւր որդ[ւ]ոյն զերանելին
սուրբ Սանդուխտ, աւրհնեցէք և բարձր
արարեք զնայ յաւիտեան:

Զկուսածին բանն բարձրեալ՝ որ ի
քըլլութիւն իւր հրաւիրեաց զկուսան
սուրբն Սանգուխա, բարձր արարեք զնայ
յաւիտեան:

Ա լեռանցն հիւսիսոյ [յ] վէմ հաւա-
տոյ [յ] հատեալ ձեռամբ թագեռոսի՝
եգեալ ի հիմն եկեղեցւոյ [յ] սուրբք Սան-
դուխտ. աղաւթիւք սորտ Քրիստոս
ողորմեա մեզ:

ի հովիտս տրտմութեան բոււեալ շուշան շնորհաց սոււրբն Սանգուիտ. աղաւթիւք սորա Քրիստոս ողորմեա մեզ:

Ի լինկաբեր սուլըթ արմատոյն Արքա-
համու տունկ փրկաւէտ յուսոյ սան-
դուղք հոգւոց հա[յ]աստանեայցու ա-
զաւթիւք սորա Քրիս⁷¹:

Արարագործ աստուած և հայր,
որ զթացար յազգս Հա[J]ոյ. և հայ-
րական մեծ զթութեամբ զսուրբն Սան-
դուխտ ետուր մեզ. աղաւթիւք սորտ
խնա[J]եա ի մեզ:

Միաձին որդի և լոյս որ կուսութեամբ եկեր յաշխարհս և նստելոցս ի խաւարի զսուրբն Սանգուխտ ետուրմեղ. աղաւթիւք սորա²²:

Ծառագայթ չաւը և որդւոյ և ծշմարիտ Աստուած Հոգին որ ծնար դռւասք իմաստուն զերանելին սուբրն Սանդուխտ զկուսութեամբ ծնօղն մեր. աղաւթիւք սորա՞:

Դա մենք պարզ այսպէս սուրբ եկեղեցին...



1. Մամկոն Եֆի իրեւէ հիմ շարական, գրուած է
իրաւս ձեւով, որդիկ ծանօթ լինելու պատճռաւ չդրին
ամբողջը: